տանն ու արդարութիւնը, անպատիժ պիտի չմնայ, այլ պիտի ինկնայ Աստուծոյ ձեռքը՝ որ վրէժխնդիր է արդարութեան ընդդէմ անիրաւութեան։

Եւ ոչ այսչափ միայն. ամէն կրօնք ըստ իր հաւատոցը կը սորվեցնէ գեղեցիկ միջոցներ առ՝ի ձեռն տալ մարդոյ ջանիցը, որպէս զի կարենայ դիւրութեամբ կատարել իր պարտքերը։ Իւրաքանչիւր կրօնք ներքին մարդը բարւոքելու և ուղղելու միջոցներ ունի, որք՝ ի մեզ կոչին շնորհք և խորհուրդք։ Հօս չեմք ուզեր այս միջոցաց ներքին զօրութեան ու ճշմարտութեան վրայ խօսիլ. միայն այս ըսեմք որ ընդհանուր համոզումը կը ցուցընէ պարզապէս մարդկային միջոցաց անբաւականութիւնն և տկարութիւնը, և թէ յայտնի ու ապացուցեալ է՝ ի փորձոյ՝ որ մարդիկ իրենց պարտքը կատարելու համար հարկ է որ սիրեն զբարին, զճշմարիտն և զարդարը, ճանչնալով որ անզօր անբաւական է պատժոյ երկիւղն, և ուրիշ օգուտ չունի՝ բայց եթէ՝ ի կեղծաւորութիւն վարժել զմարդկութիւն։

Կը փափաքիմք որ այս արևու պէս լուսաւոր վարդապետութեան ու ճշմարտութեան ամենայն ոք համոզուի, մանաւանդ անոնք որ կրօնականն՝ ի բաց թողլով՝ քաղաքական ու մարդկային կրթութեան մեծ զօրութիւն կ՚ընծայեն։ Չեմք ուզեր մոլար և սխալ կրօնք. և կ՚ըսեմք որ ամէն սխալանաց մէջ՝ որոց մէջ մարթ է անկանել մարդոյ, ծանրն և ամենավտանգաւորն է հաստատելն թէ աւելորդ են կրօնք, կամ թէ մարդկային ընկերութիւնն այն ատեն կը հասնի ճշմարիտ քաղաքականութեան՝ երբ կործանին կրօնք։

Վերջ տանք մեր խօսիցն ըսելով թէ զմարդ՝ ի հնազանդութիւն օրինաց ածելու համար և՝ ի կատարումն պարտուց իւրոց, պէտք է տպաւորել՝ ի սիրտ նորա զսէր բարւոյ և արդարութեան. և թէ երկիւղն՝ զոր դատաստանարանք կրնան ազդել մարդոյ վրայ, ոչինչ կամ ամենաքիչ օգուտ ունի. իսկ բարւոյ սէրը կրօնքն միայն կրնայ ազդել՝ ի մեզ։

ՔՕՓԻՆ ՏԻՆՆՈՋ

ԱՔՍՈՐԱԿԱՆԱՑՆ Ի. ՍԻՊԵՐԻԱ

ՎԷՊՔ 1

Ցայնժամ սկսան շարականք հանդիսատեան, և եղաւ դիակնն՝ ի դագաղս. և ի բրև տանէին զնա, կամեցաւ Ելիսաբէթ թէպէտև տկար և դողդոջուն և վհատեալ՝ գնալ զհետ մինչև՝ ի յեղեղն օթևան նորին, որ օգնական, պաշտպան և քաջալեր լեալ էր իւր, և վասն իւր աղօթելով աւանդեալ զոգին։ Ցաջակողման եղեր Քամայ, ՝ի ստորոտ բլրոյն՝ յորոյ վրայ ամբառնան աւերակք գղեկին կառուցելոյ յաւուրս պատերազմացն Պասքիրեանց, են գերեզմանք Սարաբուլ քաղաքի։ Վայրս այս է՝ ի դաշտի մեծի ցանկապատ, ունելով՝ ի մէջի փայտակերտ աղօթարան, և շուրջանակի հողակոյտք՝ բերելով՝ ի գագաթունս իւրեանց զնչան խաչին՝ ի ցոյց դամբանաց։ Այստանդ եղեւինք արկանեն ստուերս եղերականս, և՝ ի ներքուստ վիմաց դամբանականաց բուսեալ կանկառք վայրենիք լայնատարած և բազմահերձ տերևովք, և միւս այլ բոյս՝ որոյ ցօղուն մերվ և յերկիր հակամէտ՝ ի ծիլս յոգուն նրբինս ծաւալի զգիրեզմանսօր, ծաղկունք նորա գեղնաշղթք գոգդես առ՝ ի փթթել զչիրմաք հասուցեալք։

Ցուղարկաւորք ոչ սակաւք զհետ դագաղացն գնային յայլ և այլ ազգաց, ՝ի Պարսկաց, ՝ի Թրքաց և յԱրաբացւոց, փախուցեալք՝ ի գերութենէ Քիրկեանց և ընկալեալք՝ ի բնակարանս՝ կառուցեալս՝ ի վերջին դէխոյէ։ Գնային նոքա խառնիխուռն, ջահ յարդեղէն՝ ի ձեռին, զհետ զառաջաւորաց եղերական հանդիսին, կցորդելով ձայնի երիցանուցն. իսկ Ելիսաբեթ լուռ և եթ գնայր յամրաքայլ և քաջալրեալ, ՝ի բազմամբոխի անդ ոչ ունելով աղերս ընդ ումեք, բայց ընդ այնմ՝ որ ոչ էս էր։ Ցիջուցանել զդիակնն՝ ի փոս անգր, եդ երէցն ըստ արարողութեան Ցունաց դրամ մի փոքրիկ յաջ վախճանելոյն՝ ի սակ անցի. և արկեալ՝ ի նա ափով հող, ՝ի բաց եկաց։ Եւ թաղեցաւ անդ՝ ի յաւերժ մոռացութեան այրն ողորմած, որոյ չէր անցուցեալ օր մի առանց բարերարելոյ ումեք. հանգոյն բարեշունչ հողմոց, որ ամենայն ուրեք ածեն սերմանս պիտանիս՝ բուսուցանել յամե-

1 Տես երես 65։

digitised by A.R.A.R.@

նոյն նուաճանգս։ Շրջեալ էր նա ընդ կէս աշխարհի՝ սերմանելով ամենայն ուրեք իմաստութիւն և ճշմարտութիւն, և մեռանէր անծանօթ աշխարհի. այսչափ անկըցորդ է համբաւ ընդ խոնարհամիտ լաւութեան։ Այսպէս մարդիկ, որք բաշխենն զհամբաւ, շնորհեն զայն այնմ՝ որ զարմացուցանէ զնոսա, այնմ՝ որ կործանէ զնոսա, և ոչ այնմ՝ որ մխիթարէ զնոսա։ Ճառագայթ գեղանշոյլ, լոյս ակնախտիղ, պերճապայծառ փառք մարդկային, մի՞ կարծեր թէ ներէր քեզ Աստուած լինել վարձք մեծութեան, եթէ չպահէր զիւր փառս 'ի վարձ առաքինութեան։

Եկաց մնաց Եղիսաբեթ 'ի տխուր վայրի անդ մինչև ցերեկոյ, ելաց անդ, աղօթեաց բազում. և ողբք իւր և աղօթք սփոփեցին զնա։ Ցաւէտս ծանուցս բարի է և օգտակար խորհել ձիգ և յերկար ընդ երկին և ընդ մահ. զի 'ի շիրմէ ելանեն խորհուրդք քաջալերութեան, և յերկնից իջանէ յոյս սփոփանաց. նուազէ ահարկութիւն աղետից՝ ուր երևի կատարած նոցա. և ուր նշմարի վարձ նոցին՝ զոգցես լինին սիրելի։ Եղիսաբեթ լայր անտրտունջ. գոհանայր զԱստուծոյ վասն բարերարութեանցն՝ զոր եցոյց ցայնժամ յաւլևորութեան իւրում, և ոչ իրաւունս համարէր տրտնջալ վասն ոչ ևս յայնժամ ցուցանելոյ նորա։ Էր ինքն գրեթէ յեզերս Թօպոլ գետոյ անառաջնորդ անօգնական, այլ զինեալ նովին արիութեամբ, նովին խորհրդով վառեալ, և ասէր. Հայր իմ, մայր իմ, մի՛ երկնչիք, դուստր ձեր ոչ լքանի։ Այսու օրինակաւ թուէր նմա քաջալերել զծնօղս իւր, որպէս թէ մարթ էր նոցա գուշակել զմնալ իւր անտէրունչ. և իբրև ահ զսիրտ իւր պատէր, կրկնէր ինքն և երեքկնէր. Հայր իմ, մայր իմ, ծնօղք իմ. անուանքս այսորիկ փարատէին զերկիւղ նորա։ Եւ եդեալ զճակատ իւր 'ի քրքիր հող գերեզմանին, ասէր. Որ եսդ արդ յերանութեան, պա՛րտ էր ինչ կորուսանել ինձ զքեզ, մինչև ազնուականի հօր իմոյ և բարեգութ մօր գոհացեալ զքէն վասն խնամոցդ՝ զոր արկեր որբոյս հիքի. պա՛րտ էր քեզ զրկել 'ի բերկրութենէ ընդունելոյ զօրհնութիւնս նոցա։

Ի մերձենալ գիշերոյ՝ ստիպեալ Եղիսաբեթի մեկնել 'ի տխուր վայրէն, էառ զայլախազ մի հատու, և առ յիշատակէ անցից իւրոց քանդակեաց 'ի վերայ խաչին, որ զգերեզմանաւ հանգուցելոյն կանգնեալ կայր, զբան մարգարէին. «Արդարն բարձաւ, և ոչ ոք խորհի զմանէ.» (Ես. ԾԷ. 1)։ Եւ ապա տուեալ զվերջին ողջոյն իւր հրաժարական՝ ել 'ի գերեզմանատեղւոյն, և դարձաւ տրտմութեամբ 'ի սենեակն ամայի 'ի պանդոկին։ Ի վաղիւ անդր յանկանել խրում յուղի՝ ետ նմա պանդոկապետն երիս ռուբլիս, ասելով այնչափ ինչ յաւելեալ 'ի ծախուց՝ 'ի քսակ ծերոյն։ Ընկալաւ զայն Եղիսաբեթ շնորհակալեօք, փղձկեալ 'ի սրտէ՝ որպէս շնորհապարտ պաշտպանին իւրում վասն դրամոցն, զորս համարէր իբր 'ի յերկնից յղեալ, և ասէ. Ո՛վ առաջնորդ իմ և պաշտպան, սէր քո յերկարակեաց քան զքեզ՝ օգնէ ինձ, յորժամ ոչ ևս ես դու ընդ իս։

Բայց մենաւոր ընդ ուղին ոչ դադարէր յարտասուաց. ամենայն ինչ նորոգէր զվիշտ նորա, ամենայն ինչ տայր նմա զգալ զկարևորութիւն բարւոյն՝ զոր կորոյս։ Եթէ 'ի շինականաց ոք կամ յուղևորաց հայեցեալ 'ի նա հետաքրքիր հարցանէր ինչ, չէր առ նմա պաշտպան իւր պատկառելի՝ որ սաստէր ակն ածել. եթէ վտանգեալ ուրեք նստէր, և սայլ ինչ ունայն ընդ այն անցանէր, չիշխէր տալ նմա զկայ առնուլ՝ թէ գուցէ մերժումն կամ նախատինս ինչ կրեսցէ։ Եւ դարձեալ չունելով ինչ աւելի քան զերիս ռուբլիս, ջանայր յամեցուցանել զհարկ խնդրելոյ ողորմութիւն, և զրկէր զանձն 'ի հանգստենէ և 'ի սփոփանաց՝ զոր հայթայթէր նմա ծերունին յաճախ. վասն որոյ և յաղքատին օթևանս միշտ պատըսպարէր, շատացեալ ընդ անհարթ անկողինս և ընդ յոռեգոյն պարէնս։ Այսու օրինակաւ յամր ուղևորեալ, հազիւ 'ի սկիզբըն հոկտեմբերի կարաց հասանել 'ի Քազան։

Ի բազում աւուրց հետէ շնչէր հողմն հիւսիսոյ, և սառամանիք դիզացեալ յեզերս Վոլկայ՝ արգելուին զգետն. չէր մարթ անցանել ընդ այն, բայց ըստ մասին ինչ հետի՝ ընդոստ ընդ հատուածս սառին գնալով, և ըստ մասին նաւակաւ։ Նաւաստիք իսկ սովորեալք 'ի վտանգս նաւարկելոյ ընդ այն, չիշխէին անցանել յայնկոյս առանց մեծի ինչ շահու. և ոչ ոք յուղևորաց արկանէր զանձն 'ի վտանգ։ Եղիսաբեթ միայն առանց խորհելոյ 'ի վտանգն՝ կամէր 'ի մի 'ի նաւուց անտի ելանել. այլ նաւավարք մերժեցին զնա բացէ 'ի բաց իբր խօթամիտ, և երդնուին չթողուլ նմա անցանել ընդ գետն, չև բոլորովին պաղեալ։ Եհարց թէ քանի ժամանակ պարտ էր նմա սպասել. և նոքա ասեն. Ոչինչ նուազ քան զերկուս եօթնեակս։ Յայնժամ եդ 'ի միտ անցանել ընդ գետն անյապաղ. և ասէ ցնոսա աղերսանօք. Խնդրեմ 'ի ձէնջ, վասն Աստուծոյ օգնեցէք ինձ անցանել ընդ գետդ. գամ ես յայնմ կուսէ Թօպոլսքեայ

digitised by A.R.A.R.@

գնալ 'ի Պետրոպօլիս՝ խնդրել յինքնակալէն շնորհս վասն հօր իմոյ, որ յաքսորս կայ 'ի Սիպերիա. և արծաթ այնչափ ինչ է առ իս, զի եթէ եղէց աստ զաւուրս հնգետասան՝ չմնայ ինչ ինձ առ 'ի կարող լինելոյ յառաջ ևս գնալ։ Ի բանից աստի գորովեալ մի 'ի նոցանէ, կալաւ զձեռանէ նորա և ասէ. Ե՛կ, փորձեցայց ածել զքեզ. դուստր բարի Թուիս, երկիւղած յԱստուծոյ և ծնողասէր. օգնեսցեն քեզ երկինք։ Եւ մուծեալ զնա 'ի նաւ իւր, էած զնա մինչև 'ի մէջ գետոյն. ուստի և անդր չկարելով նաւել, 'ի թիկնամէջս իւր ընկալաւ զնա, և յեց 'ի մի 'ի թիոց՝ գնալով ընդ սառամանիս, եհաս անվտանգ յայնկոյս Վոլկայ, եդ զբեռն իւր յերկիր։ Եղիսաբեթ շնորհակալեալ նմա 'ի բոլոր սրտէ գոհութեամբ, կամէր ընծեռել ինչ նմա. այլ 'ի բանալ նորա զքսակն՝ տեսեալ նաւավարին զի և ոչ ռուպլիք երեք էին 'ի նմա, ասէ. Հէք դստրիկ, այդ են ամենայն գանձք քո, և զովմ՞ համարիս հասանել 'ի Պետրոպօլիս. Նիկոլայոս Քիսըլոֆ ոչ ընկալցի 'ի քէն և դանկ մի, քաւ լիցի. կամիմ՝ մանաւանդ յաւելուլ ինչ 'ի դոյն, և լիցի ինձ բարի և որդւոց իմոց վեցեցունց։ Եւ էարկ 'ի նա դրամիկ մի, և 'ի բաց գնաց՝ ձայնելով. Տէր պահեսցէ զքեզ դստրիկ։ Եղիսաբեթի առեալ զդրամիկն, և հայեցեալ ընդ այն գորովագին, ասէ. Պահեսցից զսա հօր իմում, որպէս զի տեսցէ զի աղօթք իւր լսելի եղեն, և ընդ իս է ինքն հոգւով, և ամենայն սուրբք հսկէ 'ի վերայ իմ պաշտպանութիւն իւր հայրենի։

Պայծառ էր տիւն և արեգջեր, այլ չընչէր հողմ 'ի հիւսիսոյ ցրտասառոյց։ Եղիսաբեթի ժամս չորս անդադար ընթացեալ, գտանէր վաստակեալ յոյժ. և չգտեալ ուրեք օթևան, աղաստանեցաւ առ ստամբ բլրակի միոյ՝ զոր պատսպարէին 'ի հողմոց ծայրք թխատիպք սեպացեալք։ Մերձ 'ի վայր անդր տարածանէր անտառ կաղնեաց, զի անդ նախ յեզերս Վոլկայ սկսանին երևել կաղնիք. վասն որոյ անծանօթք էին օրիորդին, և թէպէտ կապտեալ ըստ մասին 'ի վարսից, սակայն զարմանալիք էին նմա տակաւին, այլ ոչ և սիրելիք. զի զգայուցանէին նմա հանդերձ գեղեցկութեամբն զհեռաւորութիւն իւր 'ի ծնողաց իւրոց ծառք եւրոպականք. սիրելի ևս էր նմա եղևին, բնակակից աքսորականաց, ընդ որոյ հովանեաւ հանգչէին ծնօղք իւր։ Զայսափիկ զմտաւ ածեալ՝ արտասուէր նա և ասէր. Ո՜հ, երբ իցէ ինձ տեսանել զնոսա վերստին. երբ զբարբառ նոցա լսել, երբ դառնալ անդրէն անկանել 'ի գիրկս նոցա։ Եւ յասելն զայս՝ կայր բազկատարած 'ի քաղաքն կոյս 'ի Քազան, զորոյ նշմարէր տակաւին զաշտարակս 'ի բացէ, և զգղեակն վաղեմի զիշխանացն Սկիւթացւոց, որ 'ի վերոյ քաղաքին ամբառնայր 'ի ծայրս գոգցես իմն նկարէն՝ տեսիլ ահարկու։

Որ ինչ և ընդ առաջ լինէր օրիորդին զճանապարհայն՝ ազդէր 'ի սիրտ նորա տխրութիւն, հանդոյն իմն այնմ՝ զոր ազդէին նմա աղէտք իւր։ Էր զի հանդիպէր յանցաւորաց ողորմելեաց արկելոց զոյգ զոյգ 'ի շղթայս. յորոց կէսք գնային դատապարտեալ 'ի մետաղս Ներչինսքեայ վաստակել ցմահ. այլք 'ի դաշտս Իրքուցքեայ՝ բնակել յամայի եզերս Անկարայ գետոյ. և էր զի պատահէր բազմութեան գաղթականաց, որք 'ի հրամանէ ինքնակալին գնային առնել մարդաբնակ զնոր դաստակերտն յելս սահմանաց Չենաստանի. կէսք հետի գնային, այլք չեղջակուտեալ 'ի սայլս ընդ արկեղս, ընդ բեռինս, ընդ չընեարն և ընդ հաւկնեար։ Ի սոսա ամենեսին գթայր Եղիսաբեթ, թէպէտև աքսորէին վասն յանցանաց՝ որ այլուր թերևս մահապարտք լինէին։ Իսկ 'ի պատահել ումեք յաքսորելոց, սուրհանդակաւ տանէին վտարանդի վարելոց, որ ազնուական կերպարանօքն յիշեցուցանէր զհայր իւր, յուզեցան գութք նորա մինչև ցարտասուս. մատեաւ պատկառանօք առ հէքն, սփոփէր զնա ըստ կարի իւրում. և օգնէր նմա, ոչ արծաթով զոր չունէրն, այլ այնուիկ՝ որ բազում անգամ առաւել սփոփէ, և զոր կարին իսկ չքաւոր կարէ տալ հաւասար ճոխից, ասեմ՝ իսկ զգթութիւն։ Եղիսաբեթի այն միայն էին գանձք, նովաւ սփոփէր զտառապեալս՝ որոց հանդիպէրն զճանապարհայն, և օգնականութեամբ ևեթ նորին ուղևորէր այնուհետև։ Զի 'ի հասանել իւրում 'ի Վլատիմիր քաղաք, չէր մնացեալ առ նմա աւելի քան զռուպլի մի. 'ի Սարապուլ քաղաքէ մինչև անդր՝ անցեալ էին ամիսք իբր երեք, և գթութեամբ շինականաց՝ որ ձրի տան զկաթն և զհաց՝ չև էր սպառեալ աղքատին գանձ նորա, այլ սկսանէր անդ պակասել 'ի սպառ։ Կօշիկք նորա հերձոտեալ էին, ձորձք քըճքըճեալք ոչ ևս պատսպարէին զնա 'ի ցրտոյ՝ որ խոնարհեալ իսկ էր քան զերեսուն աստիճան 'ի վայր, և օրըստօրէ զայրանայր։ Ձիւնախառնաղաղ ծածկեալ էր երկիր երկոտնաչափ 'ի թանձրութիւն. էր զի պաղեալ ընդ օդս ձիւն՝ թուէր անձրև պաղլորակ, և խառնէր զերկին ընդ երկիր. և էր դարձեալ զի հեղեղք ջուրց վիհս բանային առաջի նորա, կամ մրրիկք հողմոց

digitised by A.R.A.R.@

այնպէս բուռն շնչէին, զի առ 'ի խոյս տալ 'ի հարուածոյ նոցին՝ հարկ լինէր օրիորդին փոս 'ի ձեռն անդ գործել, և պատսպարել անդ՝ ածեալ զգլխով զկեղևանս եղևնեաց, զորս կորզէր աջողակի՝ ուսեալ 'ի բնակչաց Սիպերիոյ։

Ի միում աւուրց հողմ ուռուցիկ յարուցանէր զձիւն ընդ օդս, և գործէր մառախուղ այնպիսի թանձր և խաւարային, զի 'ի քայլափոխս իւրաքանչիւր գեղևեալ օրիորդին, և ոչ կարելով նշմարել զուղին՝ հարկեցաւ զկայ առնուլ ընդ ժայռիւ ուրեք մեծաւ, հաստ զթիկունս արարեալ յայն՝ զդէմ ունել մրրկին, որ զամենայն ինչ տապալէր շուրջանակի։ Եւ մինչդեռ կայր անդ անշարժ գլխակոր, թուէր նմա լսել 'ի մօտոյ ձայն ինչ աղօտ, և յոյս առեալ գտանելոյ ապաւէն, յայն կողմն յառաջեաց գնալով 'ի սող, և տեսանէ սայլ մի կործանեալ և խորտակեալ, և սուղ ինչ անտի 'ի բացէ հիւղ մի։ Մատուցեալ անդր, բախեաց զդուռնն ասպնջական. եկն եբաց կին մի պառաւ, և գթացեալ 'ի վշտագին օրիորդն, ասէ. Հէք դստրիկ, ուստի՞ գաս միայնակ յայդմ հասակի՝ ցրտասառոյց ծածկեալ 'ի ձեանց։ Պատասխանի ետ օրիորդն, որպէս սովոր էր. Գամ յայնմ կուսէ Թոպոլսքեայ, գնալ 'ի Պետրոպօլիս, խնդրել շնորհս հօր իմում յինքնակալէն։ Յայն բան՝ այր ոմն որ անդ բազմեալ կայր յափկկիցս խոնարհեալ, 'ի վեր էառ զգլուխ իւր, հայեցաւ հիացմամբ յօրիորդն, և ասէ. Զի՞ ասես. դո՞ւ 'ի Սիպերիոյ եկեալ այսր յայդ տխս, յայդ աղէտս, 'ի բուքս ձմերայնոյ, խնդրել շնորհս հօր քում. ո՜հ, թերևս և դստրիկ իմ հէք առնէր ինձ զդոյն. այլ խլեցին զնա 'ի գըրկաց իմոց, և ոչ գիտաց ուր զիս ածէին, և չկարէ օգնել ինձ. ոչ ես լիցի ինձ տեսանել զնա, և մեռայց այսպէս. չէ և չէ իսկ մարթ հեռի յորդւոյ կեալ։ Զդողանի հարաւ Եղիսաբեթ, և կարճեալ զբանս նորա՝ ասէ սրտառուչ. Տէր իմ, թուի ինձ զի մարթ իցէ կեալ առ ժամանակ մի հեռի յորդւոյ։ Եւ յառաջ ածեալ աքսորականին զբանսն, ասէ. Եւ քանզի գիտեմ արդ զվայր աքսորանաց իմոց, մարթ է ինձ զեկուցանել զայն դստեր իմում. գրեցի իսկ առ նա, և սուրհանդակն, որոյ է տապալեալդ սայլ, և դառնայ ինքն 'ի Ռիկա՝ ուր է դուստր իմ, յանձն առնոյր ածել զգիր իմ, եթէ ունէի գոյզն ինչ առ 'ի տալ նմա վարձ. այլ չիք իմ և ոչ դանկ մի, զամենայն բարձին յինէն անողորմք։ Յայնժամ օրիորդին հանեալ զռուպլին յաւելեալ 'ի քսակէ հանգուցելոյն, մատոյց զայն նմա ամաչելով՝ զի չունէր աւելի ինչ տալ, և բեկբեկելով ձայնիւ ասէ. Բաւեսցէ՞ ինչ այս։ Իսկ նորա սեղմեալ զաջն՝ որ մատուցանէր գոյն չափ զկեանս իւր, ընթացաւ տալ սուրհանդակին զլումայն այրւոյն. և սուրհանդակն գոհ եղև ընդ այն. զի Աստուծոյ զնուէրն զայն օրհնեալ, երևեցոյց նմա որպէս և էրն իսկ մեծ և առատապարգև, առ 'ի դարձուցանել զդուստր առ հայր, երանաւէտել զազգատոհմ մի, և պտղաբերել արդիւնս արժանաւորս սրտին՝ որ նուիրեացն զայն։

Ի ցածնուլ մրրկին՝ կամելով Եղիսաբեթի գնալ զճանապարհ իւր, գիրկս էարկ պառաւոյն՝ որոյ խնամարկեալ էր նմա որպէս դստեր. և ասէ ցնա 'ի մրմունջ անլսելի աքսորականին. Զունիմ ինչ հատուցանել քեզ, բայց զօրհնութիւնս ծնողաց իմոց. այսոքիկ են իմ արդ ամենայն գոյք։ Իսկ պառաւն ասէ բարձրաձայն։ Եւ զի՞նչ. ետո՞ւր ուրեմն դմա որ ինչ էրն քո, հէք դստրիկ։ Եւ իբրև օրիորդն յամօթոյ զաչս 'ի վայր անկեալ կայր, անկաւ աքսորականն 'ի ծունկս առաջի նորա, և զձեռս 'ի վեր ամբարձեալ, ասէ. Հրեշտակդ՝ որ ետուր ինձ զամենայն ինչ զքո, զի՞նչ առնել իցէ ինձ վասն քո։ Կայր անդ կորոց մի 'ի վերայ սեղանոյն, էառ զայն Եղիսաբեթ, և հատեալ գիսակ 'ի վարսիցն՝ ետ նմա զայն, և ասէ. Քանզի 'ի Սիպերիա գնաս, տէր իմ, 'ի տեսանել քո անդ զքաղաքապետն Թոպոլսքեայ՝ աղաչեմ տալ նմա զայս, և ասել. Զոր Եղիսաբեթ առ ծնօղս իւր առաքէ, հաճեսցի յղել առ նոսա, զի գիտասցեն թէ տակաւին դուստր իւրեանց կենդանի է։ Նա երդուաւ առնել ըստ բանի օրիորդին, և յաւել. Ո՛հ, եթէ յանապատս անդ աքսորանաց իմոց լիցի ինձ չափ ինչ ազատութիւն, գիտացից գտանել զծնօղս քո, և պատմել դոցա որ ինչ դու արարեր ինձ այսօր։ Մեծ էր սրտին Եղիսաբեթի քան զպարգև արքունական գահու յոյս սփոփանացն, զոր խոստանայր այրն մատուցանել ծնօղաց իւրոց։ Զէր նորա ոչ ես ինչ բաց 'ի փոքրիկ դրամոյն, զոր 'ի նաւաստւոյն Վոլկայ ընկալեալն էր. սակայն կարէր և համարել զանձն մեծատուն, զի ժառանգէր զճշմարիտն մեծութիւն՝ զոր չկարեն գանձք և եթ տալ. պարգևաւն զոր ետ՝ ուրախացոյց նա զտառապեալն հայր, և զդստերն որբացելոյ եհատ զարտասուս։ Ահա որ ինչ պտղաբերել կարող է միակ ռուպլի 'ի ձեռս ողորմածի։

Ի Վլատիմիր քաղաքէ մինչ 'ի Փոքրով գիւղ արքունի՝ երկիրն զնստագոյն ճախճախուտ է և անտառախիտ յազգի ազգի

digitised by A.R.A.R.@

ծառոց վայրենեաց, որք թէպէտև հանդ աչաց յամարայնի՝ այլ յաճախ ապաւէն են աւազակաց. իսկ 'ի ձմերայնի նուազ է վտանգ, զի հատեալ 'ի մայրևորաց և մերկացեալ 'ի սաղարթուց՝ չտան նոցա տեղի թաքստի։ Սակայն Ելիսաբեթ լսէր զճանապարհայն աւազակութիւնս գործեցեալս անդ, որ ահացուցանէին արդեօք զնա՝ եթէ ունէր ինչ առ իւր արծաթ. այլ զօրապահիկն իսկ կարօտ մուրանալոյ, զերծ թուէր յամենայն երկիւղէ. և վահանաւ չքաւորութեանն ծածկեալ, յուսայր անցանել անվտանգ ընդ անտառն։ Վերստս ինչ այսր քան զփոքրով աւերեալ էր մրրկին զարահետն, և ուղևորաց առ 'ի Մոսկով հարկ էր առնել շրջան ընդ ճախճախուտս, զորս գործէ Վոլկա. այլ պաղ թանձր ծածկեալ զայնոսիկ՝ առնէր գնալի որպէս տրամ երկիր։ Ելիսաբեթ ըստ օրինակի այլոց կալաւ զայն ուղի, և գնայր ընդ անապատն սառնեղէն. այլ առ 'ի չգոյէ անդ շաւղի՝ մոլորեալ, խրեցաւ 'ի տղմուտս, ուստի բազում ճգամբ եղև նմա 'ի բլրաձև ուրեք երկիր ելանել։ Անդ սղմաչաղախ և վաստակաբեկ բազմեալ 'ի վէմ մի, ելոյծ զկօշիկս յոտից՝ ցամաքեցուցանել յարևու, որ ծագէր յայնժամ անաղօտ։ Անապատ էր վայրն. չերևէին անդ հետք բնակութեան. ոչ ոք անցանէր ընդ այն, և ոչ շշունչ լինէր անդ լսելի։ Գիտաց Ելիսաբեթ զի զարտուղի 'ի բաց անկեալ էր յարահետ ճանապարհէն, և լքաւ արիութիւն նորա. տեսանէր յետկուսէ զճահիճն՝ ընդ որս անցեալն էր, և 'ի բացէ անտառ անոլորտ՝ որոյ ոչ նշմարէր եզր։ Տիւն տարաժամէր, և պարտասեալ ինքն 'ի վաստակոց՝ յարուցեալ այսր անդր ընթանայր գտանել ուրեք ապաւէն կամ օգնական, այլ 'ի զուր. ոչ ոք ուրեք, և ոչ ձայն ինչ ուստեք լսելի լինէր. այլ բարբառոյ մարդկեղինի թուէր լնուլ զսիրտ նորա ցնծութեամբ։ Եւ ահա ձայնք յանկարծակի հնչեցին, և հետ ընդ հետ ելանէին արք յանտառէն. ընթացաւ առ նոսա յուսապատար. այլ 'ի մտանել առ նոսա՝ խնդութիւն նորա դարձաւ յարհաւիրս։ Կերպարանք նոցա վայրենի և դէմք դժնեայ՝ սոսկումն ածէին նմա առաւել քան զմիայնութիւնն՝ յորում էր. յուշ լինէր նմա որ ինչ լուեալն էր զեղեռնագործութենէ յելուզակաց 'ի կողմանսն յայնոսիկ, և երկուցեալ թէ գուցէ պատուհասէր Աստուած զյանդուգն վստահութիւն իւր, անկաւ 'ի ծունկս՝ խոնարհեալ առաջի ողորմութեան նորա։ Յառաջ մատեան աւազակքն, զկայ առին առ նմա, և յառեալ 'ի նա, ասեն. Դու ուստի՞ գաս, զի՞ խնդրես աստ։ Զաչս 'ի վայր արկեալ օրիորդն, և զդողանի հարեալ, ասէ. Յայնմ կողմանէ Թոպոլսքեայ գամ, երթալ խնդրել յինքնակալէն շնորհս հօր իմում։ Եւ յաւել՝ զի փոքր միւս ևս և կորնչէր 'ի ճահիճս անդ. և զի յետ վայրիկ մի զօրանալոյ՝ գնայր խնդրել իւր ուրեք ապաւէն։ Հիացեալ կացին արքն, և հետազօտէին և ևս. կամէին գիտել որչափ ինչ ունէր արծաթ վասն բազում այնչափ երկայն ուղևորութեանն. և իբրև հանեալ նորա զդրամիկն՝ զոր 'ի նաւաստուոյն Վոլկայ ընկալեալն էր՝ եցոյց նոցա, ասեն. Եւ չունի՞ս ինչ այլ։ Օրիորդն ասէ. Եւ ոչինչ։ Հայէին ընդ միմեանս հուղկահարքն անգութ և անկարեկիր, սովորութեամբ եղեռնագործութեանն խստասրտեալ. սակայն և յապուշ հարեալ՝ չկարէին հաւատալ աչացն, զի գերաշխարհիկ իմն թուէր նոցա այն, և համարէին 'ի վերնական անծանօթ զօրութենէ պաշտպանեալ զօրիորդն. և ակն ածեալ 'ի նմանէ՝ չիշխելով գործել ինչ նմա չար, այլ և ոչ բարի, 'ի բաց կացին 'ի նմանէ՝ ասելով ցիրեարս. Թողցուք զդա, մի՛ վնասեսցուք դմա, զի արդարև Աստուած ընդ դմա է։

Յարեաւ Ելիսաբեթ, և փութացեալ յետս 'ի փախուստ՝ եմուտ յանտառն. և սուղ ինչ յառաջ մատուցեալ, գտաւ 'ի կիցս քառից ուղեաց. ուր 'ի միում յանկեանցն էր մատուռն նուիրեալ Տիրամօրն, և սիւն 'ի վերայ կանգնեալ՝ ցուցանէր զքաղաքս, յորս մէն մի յուղեաց անտի գնային։ Գիտաց օրիորդն զփրկութիւն իւր, և անկեալ յերկիր՝ գոհանայր զՏեառնէ. և ոչ սխալեցին չարագործքն ասել, զի Աստուած էր ընդ նմա։ Ոչ ևս թուէր նա այնուհետև վաստակեալ, զի զօրացոյց զնա յոյս, և գնայր թեթևընթաց ընդ ճանապարհ փոքրովայ. և հասեալ վերստին յեզր Վոլկայ, որ գործէ անկիւն առ քաղաքաւն, և թանայ զորմունս աղքատին միոյ կուսաստանի, փութացաւ բախեաց զդուռնն հիւրընկալ, պատմեաց զտառապանս իւր, և խնդրեաց ապաստան։ Ընկալան զնա անդէն քորքն հիւրասիրաբար որպէս զմի 'ի քերց. և շուրջ պատեալ օրիորդն յերկնակրօն և 'ի սրբասուն քերց անտի, համարէր վայրիկ մի կալ ընդ մօր իւրում։ Պարզ և խոնարհ պատմութիւն անցիցն՝ արարեալ յօրիորդէն, եղև 'ի շինութիւն ամենայն ուխտին. ոչ դադարէին քորքն բարեգութք 'ի զարմանալոյ ընդ առաքինութիւն նորա՝ որոյ այնչափ ճգունս կրեալ, և այնչափ փորձանաց տարեալ, և բան մի տրտունջ չհանէր 'ի շրթանցն։ Յանկալի

digitised by • A.R.A.R.@

էր կուսանաց հայթհայթել զծախս իսկ ուղևորութեան նորա. այլ մենաստան նոցա չքաւոր էր յոյժ, չէին նոցա հասք, և ինքեանք իսկ կէին յողորմութենէ: Սակայն և ոչ հանդուրժեալ նոցա յուղարկել զնա պատառատուն հանդերձիւքն և հերձոտեալ կօշկօք, զգեցուցին զնա ձորձովք իւրեանց: Կամէր օրիորդն հրաժարել 'ի պարգևաց նոցա, զի 'ի կարևորաց իւրեանց զրկէին քորքն բարեգութք վասն օգնելոյ նմա. այլ նոքա զօրմս և զյարկ մենաստանին ցուցեալ, ասէին. Գոյ մեզ պատսպարան, այլ դու անպատսպար ես ամենևին. քո է սակաւիկս այս՝ զոր ունիմք, դու չքաւորագոյն քան զմեզ ես:

Ուր ուրեմն եհաս Եղիսաբեթ յարահետն, որ ածէ 'ի Մոսկով. և զարմանայր ընդ յոյժս ամբոխին՝ զոր տեսանէր, ընդ բազմութիւն կառաց և անդրուվարաց, արանց և կանանց, և ամենայն ազգի ազգի մարդկան՝ որ 'ի մայրաքաղաք անդր իբր առուիւ գնային. և որչափ մերձենայր անդր, յաւելոյր ամբոխ բազմութեանն: Ի գեօղ ուրեմն յերեկոյին զկայ էառ, ուր էին տունք առհասարակ լի ուղևորօք. և այնչափ ծանունք էին վարձք բնակութեան, զի հէք օրիորդին՝ որոյ չգոյր ինչ առ 'ի տալ՝ յոյժ դժուարին եղև գտանել օթևան: Ո՜հ, քանի՜ արտասուս 'ի սիրտ իւր ցածոյց՝ մինչև կարաց գտանել արհամարհոտ իմն կարեկցութիւն, ճաշ անուտելի, և դոյզն գլխոյ դադար՝ զերծ 'ի ձիւնաբերաց և 'ի մրրկաց: Այլ ոչ երբէք վհատեցաւ, 'ի մտի ունելով միշտ՝ զի տեսանէր Տէր զտառապանս իւր, զորս առ սէր ծնողացն կրէր. և ոչ բարձրամտեաց երբէք, համարեալ յանկեղծ սրտէ՝ ոչ աւելի ինչ քան զպարտս իւր գործել վշտակրութեամբքն վասն ծնողաց իւրոց, և ծնողասէր սրտին ախորժեալ իմն ընդ վշտակրել իւր վասն նոցա:

Եւ ահա յանկարծ գանչէր զանգականին ամենուստ, և յամենայն կողմանց հնչէր անուն ինքնակալին. Թնդիւնք հրետից որոտային 'ի պարսպաց մայրաքաղաքին ահարկուք նմին, զի չէր երբէք բոմբիւն այնպիսի ընդ ունկն նորա բախեալ: Հարցանէր զվասն էրն երկիւղիւ՝ որոց անդ 'ի գրաստաճոխս կային զկառօք, որ կործան անկեալ դնէր: Նոքա ասեն. Ինքնակալն 'ի քաղաք այսր մտանէ: Օրիորդն ասէ. Եւ ո՞րպէս. մի՞չ 'ի Պետրապօլիս ինքնակալն բնակէ: Նոքա ողորմեալ 'ի տգիտութիւն նորա, ասեն. Հէք օրիորդ, չգիտիցես զի Աղեքսանդր գայ այսր առնել զհանդէս թագաւորելոյ իւրոյ: Յայնժամ օրիորդն ձեռնամածեալ խնդութեամբ՝ զի յերկնից տնօրինէր նմա գալ անդ ինքնակալին, յորոյ 'ի ձեռին էր բախտ ծնողաց իւրոց, և հասանել յաւուրս աշխարհօրէն ուրախութեան՝ յորս լնեն խաստութիւն և սրդարութիւն 'ի սիրտ թագաւորաց, առ 'ի լսելի առնել նոցա զգթութիւն միայն. և դարձուցեալ զաչս իւր յերկիր աքսորանաց ծնողաց իւրոց, գոչէր. Ծնօղք իմ, ընդէ՞ր միայնակ վայելեմ 'ի յոյս, ընդէ՞ր ձայն ուրախութեան դստեր ձերոյ չկարէ հասանել յունկն ձեր:

Յամին 1801 եմուտ նա 'ի մայրաքաղաքն մեծ 'ի Մոսկով, և համարէր վախճան լեալ վշտաց իւրոց, ոչ կարծելով զի այլ ևս աղէտք պատրաստեալ կային նմա: Ի մտանելն 'ի քաղաքամէջ անդր՝ ետես ապարանս հոյակապս, զարդարեալս արքունական ճոխութեամբ, և առ նոքօք հիւղս ծխամածս անպատսպարս 'ի հողմոց. ետես փողոցս բազմամբոխս, մինչև հազիւ կարող լինել նմա հերձանել զամբոխն՝ որ նեղէրն զնա և խթէր շուրջանակի արմկաւ: Սուղ ինչ անտի 'ի բացէ եգիտ անտառս և մարգագետինս, որպէս զի կարծել զանձն 'ի դաշտավայրի մեծի. զկայ էառ վայրիկ մի յընդարձակ ճեմելիս ծառազարդս, ուր գնայր բազմութիւն յոյժ՝ հնչելով հանդիսին. երթևեկէին կառք շառաչմամբ մեծաւ ընդ ամենայն կողմանս արշաւասոյր: Հնչէր զանգակն մեծ կաթողիկէին անլռելի, և ամենայն ուստեք քաղաքին այլ զանգակատանին տային արձագանգ. և թնդիւնք հրետից, որ երբէք երբէք արձակէին, հազիւ լինէին լսելի 'ի շփոթն ձայնից՝ որովք հնչէր քաղաքն ընդարձակ: Մանաւանդ 'ի մտանել 'ի հրապարակն Կրեմլեան՝ երթայր և յաւելոյր ամբոխն և աղմուկ. խարոյկ բոցածաւալ ամենայն ուրեք բորբոքէր: Եղիսաբեթ նստաւ անդ մեկուսի զգուշութեամբ, ցրտահարեալ և պարտասեալ զօրն ցերեկ յատին, և ուրախութիւն նորա այգուն փոխեալ 'ի տրտմութիւն. զի շրջեալ նորա ընդ անթիւ փողոցս քաղաքին և տեսեալ ապարանս բազումս հոյակապս, և ոչ ուրեք եգիտ իւր դադար. զի տեսեալ բազմութիւն յոյժ յամենայն ազգաց, չեգիտ զոք 'ի նոցանէ իւր օգնական. զի լուեալ էր անդ հարցանելոյ բազմաց զճանապարհ տանց իւրեանց, և զայրանալոյ ընդ մոլորել իւրեանց. և նախանձեալ ընդ բախտ նոցա՝ ասէր 'ի մտի. Երանի՜ որք խնդրեն զբնակութիւն իւրեանց. եղո՜ւկ այնմ՝ որոյ չիք տեղի խնդրելոյ, և չիցէ ուստեք մոլորեալ:

Կը շարունակուի:

digitised by A.R.A.R.@